Հաստատված է
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
07.03.2022 թ. -ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ _____ Ե. Սերոբյան

Հիմք՝ ՇՊՀ-ի գիտական խորհրդի
26.10.2021թ.-ի նիստում հաստատված՝
ՇՊՀ-ի Ֆակուլտետի դեկանի ընտրության
(նոր խմբագրությամբ) կանոնակարգ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ֆակուլտետի դեկանի (այսուհետ՝ դեկան) պաշտոնի տեղակալման թեկնածու(ներ)ի առաջադրման, ընտրությունների անցկացման և դեկանին պաշտոնում հրամանագրման կարգը:

1.2 Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասության սահմաններում՝ ՇՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերի համաձայն:

1.3 Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել այն անձը, ով ունի գիտական աստիճան, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ:

Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավել, քան երկու ժամկետ անընդմեջ՝ անկախ ֆակուլտետի վերանվանումից կամ վերամիավորումից:

1.4 Դեկանն ընտրվում է ՇՊՀ գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Դեկանի ընտրությունների անցկացման ամսաթիվը որոշվում է ռեկտորի հրամանով՝ առնվազն երկու ամիս առաջ՝ մինչև գործող դեկանի լիազորությունների ժամկետի լրանալը:

1.5 Ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում ՇՊՀ ռեկտորը՝ սահմանված կարգով կնքելով աշխատանքային պայմանագիր:

1.6 Դեկանի գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք: Դեկանը չի կարող զբաղեցնել այլ վարչական պաշտոն:

2. ԴԵԿԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

2.1 Դեկանի ընտրությունը նշանակվում է ՇՊՀ ռեկտորի հրամանով, և այդ մասին հայտարարությունն ընտրություններից առնվազն հիսուն օրացուցային օր առաջ՝ հրամանին հաջորդող օրվանից 1 շաբաթվա ընթացքում, հրապարակվում է ՇՊՀ կայքէջում և «Կրթություն» շաբաթաթերթում, ինչպես նաև առնվազն 2 անգամ հրապարակվում է մարզային հեռուստաընկերություններից մեկով:

2.2 Դեկանի պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների՝ ամբիոնների կողմից, կամ ինքնաառաջադրմամբ:

2.3 Թեկնածուների կողմից փաստաթղթերի հանձնումն սկսվում է ռեկտորի հրամանին հաջորդող օրվանից 20 աշխատանքային օր անց և տևում է 5 աշխատանքային օր: Թեկնածուները ՇՊՀ գիտական քարտուղարին առձեռն ներկայացնում են առաջադրման վերաբերյալ հետևյալ փաստաթղթերը՝

ա. ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ նիստի արձանագրության հիման վրա կազմված համապատասխան քաղվածքը և թեկնածուի համաձայնությունը (դիմում-հայտը), իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմում,

բ. ինքնակենսագրություն, որը պետք է պարունակի թեկնածուի ուսման, աշխատանքային և գիտակրթական գործունեության նկարագիրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն,

գ. վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ(եր),

դ. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը և մեկ լուսանկար 3x4սմ չափսի,

ե. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը,

զ. գիտական աստիճան(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,

է. գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը (առկայության դեպքում),

ը. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցուցակը,

թ. թեկնածուի գործունեության ծրագիրը, այն է՝ «Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ)՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով (կրիչով)՝ փակ և ստորագրված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո՝ ռեկտորի կողմից, համապատասխան դիմումների մակագրման ժամանակ,

ժ. պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ (առկայության դեպքում):

2.4 Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատվելուց հետո վերադարձվում են: Փաստաթղթերի հանձնման դեպքում գիտական քարտուղարը հավակնորդին տրամադրում է փաստաթղթերի հանձնումը հավաստող տեղեկանք (**տե՛ս Հավելված 1**):

2.5 Հայտերն ընդունելիս գիտական քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 2.3 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդն այդ մասին տեղեկացվում է նույն պահին և փաստաթղթերը հետ են վերադարձվում նրան: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

2.6 Հայտերի ընդունման ավարտի հաջորդ աշխատանքային օրը գիտական քարտուղարը դեկանի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ներկայացնում է ՇՊՀ ռեկտորին՝ մակագրման: ՇՊՀ ռեկտորի կողմից բացված փաթեթ(ներ)ը և մակագրված դիմում(ներ)ը՝ կից փաստաթղթերով, վերադարձվում է (են) գիտական քարտուղարին:

2.7 ՇՊՀ գիտական քարտուղարը, ՇՊՀ ռեկտորի կողմից մակագրված դիմում(ներ)ը և բացված փաթեթ(ներ)ը ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, դեկանի պաշտոնի թեկնածու(ներ)ի ներկայացրած Հայեցակարգ(եր)ը և ըստ ազգանունների այբբենական հաջորդականության կազմած ցուցակը (որտեղ նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, առաջադրման եղանակը) հրապարակում է ՇՊՀ կայքէջում և այդ մասին նույն օրը տեղեկացնում ՇՊՀ ռեկտորին և ֆակուլտետի դեկանին:

3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

3.1 Ֆակուլտետի դեկանը, սույն կանոնակարգի 2.7 կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո, տասն օրվա ընթացքում հրավիրում է ֆակուլտետի խորհրդի նիստ՝դեկանի պաշտոնի թեկնածուների ներկայացրած Հայեցակարգերի քննարկման համար: Նույն օրը այդ մասին իրազեկում է ՇՊՀ ռեկտորին և գիտական քարտուղարին, իսկ վերջինս երկօրյա ժամկետում ապահովում է դեկանի պաշտոնի թեկնածուների

իրազեկվածությունը՝ ֆակուլտետային խորհրդի նիստի անցկացման օրվա, ժամի և տեղի մասին:

3.2 Ֆակուլտետի խորհրդի նիստն իրավազոր է ֆակուլտետի խորհրդի կազմի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում: Խորհրդի նիստում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելի), բաց քվեարկությամբ:

3.3 Ֆակուլտետի խորհրդի նիստը վարում է ՇՊՀ ռեկտորը կամ նրա հանձնարարությամբ՝ պրոռեկտորներից մեկը, որին գիտական քարտուղարը ֆակուլտետի խորհրդի նիստից առաջ տրամադրում է դեկանի թեկնածուների փաստաթղթերը:

3.4 Նախագահողը հարցի քննարկումը սկսում է թեկնածուների առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը: Ֆակուլտետային խորհրդի նիստին դեկանի պաշտոնի հավակնորդի բացակայությունը հիմք չէ նրա ներկայացրած Հայեցակարգը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

3.5 Նախագահողը, ըստ ցուցակի, ֆակուլետի հնգամյա զարգացման ծրագրային ելույթի համար ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուներին: Ելույթի տևողությունը որոշում է ֆակուլտետի խորհուրդը:

3.6 Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո նախագահողի առաջարկությամբ ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցները կարող են հարցեր տալ թեկնածուներին: Հարցերը կարող են սահմանափակվել նախագահողի առաջարկի հիման վրա՝ ֆակուլտետի խորհրդի կայացրած որոշմամբ: Հարց ու պատասխանին հաջորդում են ֆակուլտետային խորհրդի անդամների ելույթները: Թեկնածուները կարող են հանդես գալ ամփոփիչ ելույթներով:

3.7 Ֆակուլտետի խորհուրդը յուրաքանչյուր թեկնածուի ներկայացրած Հայեցակարգի վերաբերյալ կայացնում է որոշում՝ այն գնահատելով <<բավարար>> կամ <<անբավարար>>:

3.8 Ֆակուլտետի խորհրդի նիստը նախագահողը դեկանի թափուր պաշտոնի թեկանածու(ներ)ի փաթեթները և նիստի արձանագրությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է ՇՊՀ գիտական քարտուղարին՝ ՇՊՀ Գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1 Դեկանի ընտրությունն իրականացնող Գիտական խորհրդի նիստի օրակարգում քննարկվում են հետևյալ հարցերը՝

1. Թեկնածու(ներ)ի՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,
2. Թեկնածու(ներ)ի ներկայացրած Հայեցակարգերի քննարկում,
3. Թեկնածու(ներ)ին հարցերի ուղղում և Գիտական խորհրդի անդամների ելույթներ,
4. Թեկնածուներին լրացուցիչ ելույթի հնարավորության տրամադրում,

5. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,
6. Դեկանի ընտրության նպատակով փակ, գաղտնի քվեարկություն,
7. Դեկանի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

4.2 Թեկնածու(ներ)ի՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշման համար գիտական քարտուղարն ըստ թեկնածուների ցուցակի ներկայացնում է նրան(ց) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն, որից հետո Գիտական խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում: Գիտական խորհրդի նիստին դեկանի պաշտոնի հավակնորդի բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

4.3 Նախագահողը ծրագրային ելույթի համար ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածու(ներ)ին՝ ըստ ցուցակի: Ելույթի տևողությունը որոշում է Գիտական խորհուրդը:

4.4 Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո Գիտական խորհրդի նիստի մասնակիցները կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով՝ Գիտական խորհրդի որոշմամբ:

4.5 Թեկնածու(ներ)ի ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը, որին կարող են մասնակցել միայն Գիտական խորհրդի անդամները:

4.6 Քննարկման ժամանակ ելույթների տևողությունը սահմանում է գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում Գիտական խորհրդի համաձայնությամբ նախագահողը կարող է ավելացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը: Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ Գիտական խորհրդի որոշմամբ:

4.7 Քննարկումների ավարտից հետո թեկնածու(ներ)ին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի տևողությունը սահմանում է Գիտական խորհուրդը:

4.8 Քննարկման ավարտից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածու(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը և հայրանուն(ներ)ը Գիտական խորհրդի որոշմամբ գրանցվում են քվեաթերթիկում:

4.9 Նախագահողը Գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ, գաղտնի քվեարկության կարգը:

4.10 Նախագահողի առաջարկի հիման վրա Գիտական խորհրդի կայացրած որոշմամբ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար Գիտական խորհրդի անդամներից ընտրվում է կենտ թվով (երեք հոգուց ոչ պակաս) հաշվիչ հանձնաժողով: Դեկանի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.11 Մեկ թեկնածուի առկայության դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, «կողմ» և «դեմ» բառերը **(Հավելված 2)**: Երկու և ավելի թեկնածուների առկայության դեպքում քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշվեն թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը և վերջին տողում՝ «բոլորին

դեմ եմ» արտահայտությունը **(Հավելված 3)**: Քվեաթերթիկների հակառակ կողմում պետք է լինի գիտական քարտուղարի և հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրությունը՝ մինչև քվեարկությունը:

4.12 Հաշվիչ հանձնաժողովը Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է Գիտական խորհրդի անվանացանկում:

4.13 Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն **(տե՛ս Հավելված 4՝ մեկ թեկնածուի դեպքում**, **տե՛ս Հավելված 5՝ մեկից ավելի թեկնածուների դեպքում)**:

4.14 Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա. «կողմ» կամ «դեմ» բառերի դիմաց (միակ թեկնածուի քվեարկության դեպքում) կատարված է նշում,

բ. քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» տողի դիմաց (երկու և ավելի թեկնածուների քվեարկության դեպքում):

Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» տողի դիմաց քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է «V» նշումը:

Մնացած դեպքերում (ինչպես նաև քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում) քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

4.15 Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է գիտական խորհրդի անդամների ձայների կեսից ավելին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո Գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրության մեջ ամրագրված տվյալները:

4.16 Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում ՇՊՀ Գիտական խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) Ֆակուլտետի դեկան ընտրվելու մասին,

2) Կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) Ընտրությունները չկայացած ճանաչելու մասին:

4.17 Երկու և ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից Գիտական խորհրդի անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում Գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են.

ա. առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները,

բ. առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնքան ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները,

գ. առավելագույն հավասար ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

4.18 Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն կանոնակարգի համաձայն:

Կրկնակի քվեարկության արդյունքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է Գիտական խորհրդի անդամների ձայների կեսից ավելին:

4.19 Դեկանի ընտրությունները համարվում են չկայացած, եթե.

ա. դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել Գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը,

բ. կրկնակի քվեարկության արդյունքում որևէ թեկնածու չի ստացել Գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

5. ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Ռեկտորը մրցույթով ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

5.2 Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է դեկանի նոր ընտրություններ:

5.3 Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամ լուծվել ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի սահմանված կարգով, ինչպես նաև՝ կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ֆակուլտետի կառուցվածքի փոփոխման (ֆակուլտետի բաժանում, միավորում և այլն) պատճառներով: Պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկում են երկու ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո ՇՊՀ ռեկտորը նշանակում է ֆակուլտետի դեկանի նոր ընտրություններ՝ սույն կանոնակարգի համաձայն:

5.4 Բացառիկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ, ֆակուլտետի կառուցվածքային փոփոխություններ (միավորում, բաժանում և այլն), դեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն, ընտրությունը չկայանալու կամ այլ հատուկ դեպքերում) ռեկտորն իրավասու է դեկանի պաշտոնում նշանակել սույն կանոնակարգի 1.3 կետում նշված պահանջները բավարարող անձի՝ մինչև վեց ամիս ժամկետով, իսկ ժամկետի ավարտին՝ կազմակերպել դեկանի ընտրություններ:

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է ՇՊՀ _____ ֆակուլտետի դեկանի
ֆակուլտետի անվանումը

ընտրության մրցույթի թեկնածու
_____-ին
թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը

առ այն, որ նա վերոգրյալ մրցույթին մասնակցելու համար _____-ին
ամսաթիվ

ՇՊՀ գիտական քարտուղարին է ներկայացրել հետևյալ փաստաթղթերը.

ա. ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ նիստի արձանագրության հիման վրա կազմված համապատասխան քաղվածքը և թեկնածուի համաձայնությունը (դիմում-հայտը), իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմում (առդիր՝ _____ էջ),
բ. ինքնակենսագրություն, որը պետք է պարունակի թեկնածուի ուսման, աշխատանքային և գիտակրթական գործունեության նկարագիրը (առդիր՝ _____ էջ),
գ. վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ(եր) (առդիր՝ _____ էջ),
դ. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը և մեկ լուսանկար 3x4սմ չափսի (առդիր՝ _____ էջ),
ե. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը. (առդիր՝ _____ էջ),
զ. գիտական աստիճան(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը. (առդիր՝ _____ էջ),
է. գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը (առդիր՝ _____ էջ),
ը. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցուցակը. (առդիր՝ _____ էջ),
թ. թեկնածուի գործունեության ծրագիրը, այն է՝ «Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ)՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով (կրիչով)՝ փակ և ստորագրված փաթեթով,
ժ. պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ (առդիր՝ _____ էջ):

Հարգելի՝ թեկնածու, ***տեղեկացնում ենք, որ.***

1. Ընտրության գործընթացներով պայմանավորված՝ Ձեզ վերաբերող ծանուցումները կստանաք Ձեր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստով և/կամ հեռախոսահամարով:

ՇՊՀ գիտական քարտուղար՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

Հավելված 2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Գիտական խորհրդի «___»_____ թ. նիստում (արձանագրություն թիվ __)
ամսաթիվ, տարեթիվ

_____ֆակուլտետի դեկանի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

_____ կողմ ☐ դեմ ☐
թեկնածուի ազգանուն-անուն, հայրանուն

*) «V» նշումը կատարվում է «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում: Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշում է կատարվում «կողմ», իսկ դեմ լինելու դեպքում՝ «դեմ» գրառմամբ վանդակում:

Հավելված 3

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Գիտական խորհրդի «___»_____ թ. նիստում (արձանագրություն թիվ __)
ամսաթիվ, տարեթիվ

_____ ֆակուլտետի դեկանի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության

Հ	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄԸ
1.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	
4.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	
5.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	
6.	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

*) Որևէ թեկնածուի կողմ լինելու դեպքում տվյալ թեկնածուի անվան դիմաց, իսկ բոլորին դեմ լինելու դեպքում՝ քվեաթերթիկի համապատասխան տողի վանդակում կատարվում է «V» նշում:

Հավելված 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է ՇՊՀ Գիտական խորհրդի _____ նիստում հետևյալ կազմով՝

Հ	*ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ*
1.	Ազգանուն, անուն (նախագահ)
2.	Ազգանուն, անուն
3.	Ազգանուն, անուն
4.	Ազգանուն, անուն
5.	Ազգանուն, անուն

ՇՊՀ Գիտական խորհրդի _____ անդամից ներկա էին _____-ը:

Քվեարկվել է _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնորդ(*ներ*)ի թեկնածությունը:
Քվեարկությանը մասնակցել է ՇՊՀ Գիտական խորհրդի _____ անդամ:
Բաժանվել է _____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

Հ	*ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆՆ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ*	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*
1.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ		

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____
ֆակուլտետի անվանումը

ֆակուլտետի դեկանի ընտրություններ***ում*** (***ը***)_____

_____:

լրացնել Գիտական խորհրդի որոշումը

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝_____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*
2. _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հավելված 5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է ՇՊՀ Գիտական խորհրդի _____ նիստում հետևյալ կազմով՝

Հ	*ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ*
1.	Ազգանուն, անուն (նախագահ)
2.	Ազգանուն, անուն
3.	Ազգանուն, անուն
4.	Ազգանուն, անուն
5.	Ազգանուն, անուն

ՇՊՀ գիտական խորհրդի _____ անդամից ներկա էին _____-ը:

Քվեարկվել է _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածությունը:
Քվեարկությանը մասնակցել է ՇՊՀ Գիտական խորհրդի _____ անդամ:
Բաժանվել է _____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

Հ	*ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆՆ, ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ*	*ԿՈՂՄ*
1.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	
4.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	
5.	ԹԵԿՆԱԾՈՒ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	
6.	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____
ֆակուլտետի անվանումը

ֆակուլտետի դեկանի ընտրություններ***ում*** (***ը***)_____

_____:

լրացնել Գիտական խորհրդի որոշումը

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*
2. _____ _____
ստորագրություն *ազգանուն, անուն*